Արձանագրություն N 5
ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(19/11-Լ) ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 24 հունիսի 2019 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Ղարիբջանյանը
անդամներ՝ Հ. Վանյանը, Ջ. Բաբայանը, Մ. Կարապետյանը
քարտուղար՝ Լ. Հարությունյանը
բացակայում էր՝ Լ. Դեմիրչյանը

I. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին

(Ա. Ղարիբջանյան)

1. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրություն թիվ 4-ով մատնանշված անհամապատասխանությունների շտկված տարբերակները, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված դրական եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը որոշեց.

   ա/ Արձանագրություն թիվ 4-ի 2-րդ կետը սահմանել նոր խմբագրությամբ՝

   «Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր հավելված 6 և 6.1-ը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված դրական եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անճշտություններ, մասնավորապես, ՍՅ.ՌՈՒ.ՄԱ ՍՊԸ-ի ներկայացրած Հավելված 6.1-ի 8-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը հստակ չեն ներկայացնում կոնկրետ ապրանքը, այլ պարունակում են հրավերով սահմանված նվազագույն չափորոշիչներով միջակայքեր, պարունակում են ոչ պակաս, առնվազն բառերը»:

   բ/ «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել բավարար:

   գ/ «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել բավարար:

   դ/ «Արմա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել բավարար:

   ե/ «Ինֆինիտի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել բավարար:

2. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

- 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել «Ինֆինիտի Գրուպ ՍՊԸ»-ին:
- 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել «Պետրոսյան Հոլդինգ ՍՊԸ»-ին:
- 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել «Արմա Թրեյդ ՍՊԸ»-ին:
- 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել «ՍՅ.ՌՈՒ.ՄԱ ՍՊԸ»-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Ղարիբջանյան

անդամներ՝ _____ Հ. Վանյան

_____ Ջ. Բաբայան

_____ Մ. Կարապետյան

քարտուղար՝ _____ Լ. Հարությունյան

II.

Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Ա. Ղարիբջանյան)

1. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրանց հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Ղարիբջանյան

անդամներ՝ _____ Հ. Վանյան

_____ Ջ. Բաբայան

_____ Մ. Կարապետյան

քարտուղար՝ _____ Լ. Հարությունյան